ՀԱՅԱՍՏԱՆ – ԱՐՑԱԽ

ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՎՐԱՅ

ԲԱԶՄԱԹԻՒ ԶՈՀԵՐ ՄԱՃԿԱԼԱՇԷՆ

ԱԶՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐ

Բազմաթիւ զոհեր կային շաբաթավերջին Մարտունիի շրջանը (Մաճկալաշէն) եւ կացութիւնը շատ ծանր էր Լաչին:

Երկուշաբթի առտու Երեւանէն մեր առած լուրերու համաձայն Մաճկալաշէն 16 մեռեալ կար եւ աւելի քան 10 վիրաւոր: Բուռն ռմբակոծութեան ենթարկուած էր Ստեփանակերտ եւ մեծ վնասներ կային, բայց զոհերու թիւը դեռ ծանօթ չէր: Յիշենք նաեւ որ Երկուշաբթի, Սեպ. 21-ը, «ոչ-աշխատանքային» օր է, քանի անկախութեան առաջին տարեդարձն է:

Լաչինի գօտիի վրայ յարձակումները շատ զանգուածային են վերջին օրերուն եւ հոն ալ երեք մեռեալ կար: ԹԱՍ գործակալութեան համաձայն, Կիրակի օր, Ազրբէջան վերջնագիր մը տուած է Հայաստանի, որ 48 ժամէն Ղարաբաղէն հեռացնէ զինուորական իր բոլոր ուժերը Լաչինի ճամբով: Աւելցուցած է որ անցքը կ'երաշխաւորեն ...: Երկուշաբթի առտու, Երեւանի իշխանութիւնները Մասկուայի հեռատեսիլէն տեղեկացած էին այս վերջնագրին, բայց, իրենք ոչինչ ստացած էին:

Հայ - ազերի հանդիպում մը նախատեսուած էր Նախիջեւանի սահմանը: Հայաստանի կողմէ կը ներկայանար Արա Սահակեան:

Քոթիտիէն տը Փարի *(Սեպ. 21) մեր տեսած օրաթերթերէն միակն էր որ անկիւն մը շնորհած էր Ղարաբաղի եւ կ'ըսէր թէ ըստ Ղարաբաղի Խորհրդարանի մամուլի սպասարկութեան 400 մեռեալ կար շաբաթավերջի բուռն բախումներու հետեւանքով: Թերթը կ'արձագանգէր նաեւ Ազրբէջանի վերջնագրին:*

Շաբաթավերջին եւ առաջ ալ ռմբակոծութիւնները չեն դադրած սահմանամերձ շրջանները՝ Գորիս, Կապան, եւ շրջանի գիւղերը: Ագարակ՝ երկու մեռեալ կայ եւ ութ վիրաւոր: